

Հարցազրույց Horizon TV, Paros Program, Յունուար 29, 2018, երեկոյեան ժամի 7-ին

<https://youtu.be/7PPzGxOnoW4>

Ներքերում բերուածը միայն մօտաւոր տեքստն է:

**Անցեալ Դեկտեմբերի 26-ի «Ասպարէզ»ի Նոր Տարուայ բացառիկ համարում լոյս տեսաւ ձեր ծաւալուն յօդուածը ուր բացայայտում էիք հայ բոլշեւիկների խաղացած բացասական դերը Հայաստանի անկախ Հանրապետութեան կեանքում: Հայաստանի անկախութեան վերականգնման 100-ամեակի շէմին ինչո՞ւ այս նիւթը:**

Հայաստանի այդ կարճատեւ անկախութեան պատմութեան մասին շատ է գրուել Սփիւռքում, Սիմոն Վրացեան, Ալեքսանդր Խատիսեան, Արտաշէս Բաբալեան, Համբարձում Տէրտէրեան, Վահէ Արծրունի, Բաբկէն Փափագեան, Ալեքսանդր Շնէուր եւ այլն: Իսկ ես պատանի հասակից այդ պատմութիւնը կերտած ու Պարսկաստան ծուարած մեծութիւնների, մտաւորական, քաղաքական գործիչ, ղեկավար, զինուոր, ֆիդայի խմբապետ, շնչի տակ դաստիարակուելով սիրել ու կարդացել եմ այդ պատմութիւնը: Հպարտացել եմ նրանց ձեռքբերումներով ու սխրանքներով, ցաւ եմ զգացել ու ցասումով եմ լցուել երբ հենց հայ մարդու, բոլշեւիկ կոչուած հայի ապագային, դաւաճան գործունէութեան մասին եմ կարդացել: Այստեղ, UCLA համալսարանում աւելի մխրճուեցի հայ ժողովրդի պատմութեան մանաւանդ անկախութեան շրջանի պատմութեան մէջ, չնայած գրականութեան մէջ էի մասնագիտանում: Եւ Ռիչարդ Յովհաննսեանի բազմահատոր կոթողային գործը՝ Հայաստանի Հանրապետութեան նուիրոած, դարձաւ ուղեցոյց եւ կարելոք աղբիւր ինձ համար: Իմ ամբարած գիտելիքներին հակասող երեւոյթ էր 70 տարի շարունակ խորհրդային պատմագրութեան մէջ ու պետական այրերի կողմից 1918-1920 անկախ Հայաստանի ղեկավարութեան դէմ շարտուած ցեխարձակումները. այդ երեւոյթը աւելի խթանեցին ինձ հայ բոլշեւիկ տիպարը վեր հանելու, երեւան բերելու նրա կործանիչ գործունէութիւնը՝ ամէն գնով տապալելու Հայաստանի անկախութիւնը, կոտորակելու տարածքը ու դրա մնացորդացը Ռուսաստանի գիրկը նետելու: Այս թեմայի շուրջ աշխատութիւնս, «Հայաստանը Հ.Յ.Դ. Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում, 1917-1921» վերնագրով լոյս տեսաւ 1997-ին Երեւանում՝ Պետական Համալսարանի երաշխաւորութեամբ: Ի հարկէ աշխատութեանս պատրաստութեան համար բացի հրատարակուած ուսունասիրութիւններից ու փաստաթղթերից աշխատել եմ նաեւ Հայաստանի պետական արխիւում եւ Բոսթոնի Դաշնակցութեան արխիւում: Անցեալ Սեպտեմբերին, երբ ինձ առաջարկուեց դասխօսութեամբ հանդէս գալ Կարս Ուսումնարանի (Gars Academia) ծրագրում, առանց շատ մտածելու Դաշնակցութիւն-բոլշեւիկ յարաբերութիւնների նիւթը ընտրեցի, բայց չհիմնուեցի

գրքիս վրայ միայն, աւելացրի նոր փաստեր, նոր մեկնաբանութիւններ, մանաւանդ՝ Հայաստանից եկած, ինչպէս՝ Modus Vivendi-ի հրատարակութիւնները: Այս նիւթը ընտրեցի, քանի որ հաւատում եմ, որ մեր երիտասարդութիւնը շատ քիչ բան գիտի այդ մասին: Պիտի ասեմ, որ Հայաստանում էլ շատ բան չգիտեն այդ մասին: Գիտեն խեղաթիւրուած ու 70 տարի դպրոցներում ու համալսարաններում դասաւանդուած պատմութիւնը, նպատակադրուած կերպով Դաշնակցութեան դէմ ուղղուած, Դաշնակցութիւնը սեւացնող, Դաշնակցութեան դէմ ասելութիւն սերմանող: Եւ դա դարձել է մտածելակերպ, հասարակական կարծիք, մտայնութիւն, որ դժբախտաբար 25 տարուայ անկախութիւնը շատ բան չի փոխել: Ու այսօր, նոյնիսկ կաարող եմ ասել օտար ուժերն են հրահրում այդ մտայնութիւնը, որովհետեւ շատ քաղաքական հարցերում Դաշնակցութիւնը խոչընդոտ է:

Վերադառնալով ձեր հարցումին, թէ Հայաստանի անկախութեան վերականգնման 100-ամեակի շէմին ինչո՞ւ այս նիւթը, պիտի պատասխանեմ, որ եթէ ուզում ենք լիովին թոթափել համայնավար ապագային կարգերի 70-ամեայ ազդեցութիւնը եւ ունենալ ողջամիտ ու անկողմնակալ ազգային պատմագրութիւն, պիտի կարողանանք գիտակից եւ ուղղաբարոյ նայել անցեալին, 1918-ի մեր պետականութեան վերստեղծումից մինչեւ խորհրդային շրջան. կշռադատել, քննարկել եւ մեր իրական պատմութիւնը աշխարհի ու գալիք սերունդների դատին ներկայացնել:

**Ասացիր Հայաստանում տիրող մտայնութեան մասին, բայց որքան լսում ենք խորհրդային կարգերը քննադատող բաւական միջոցառումներ են կազմակերպում ու հրատարակութիւններ են լոյս տեսնում: Արդեօք փոխուած չէ՞ այդ մտայնութիւնը: Ի՞նչ կասէք այդ մասին:**

Այո, ուրախ եմ հաստատելու, որ երիտասարդ պատմաբաններն ու պատմութեան ուսանողները խորանում են, գրում են այդ մասին: Պետական արխիւները բաց են եւ տնօրէնը քաջալերում է մանաւանդ Անկախ Հայաստանի պատմութեան զանազան երեսները բացել: Համարձակօրէն խօսում է ազգային հերոսներ համարուած համայնավար ղեկավարների ապագային ընթացքի մասին անկախութեան օրերին ու մանաւանդ դրանց մեղսակցութիւնը ստալինեան բռնաճնշումների տարիներին: Գիտաժողովներ, ցուցահանդէսներ, ինչպէս օրինակ Յովհաննէս Թումանեանի Տուն Թանգարանի աստիճաններին բացուած «Խաւարում» կոչուած ցուցահանդէսը, որ մերկացնում էր Միկոյեանի, Կասեանի, Նուրիջանեանի, Մռաւեանի եւ այլոց տիպարը եւ դրանց «5-րդ շարասին եւ ազգային ամօթ» էր որակում: Բայց իհարկէ, այս բոլորը ո՛չ պետական մակարդակով: Վերապահութիւնը դեռ շարունակուում է, եւ դա գալիս է հենց այդ արմատաւորուած ընկալումից որ «Առաջին Հանրապետութիւն»ը, ինչպէս Հայաստանում սովորութիւն է այդպէս կոչել,

Դաշնակցական հանրապետություն էր եւ դաշնակները հայ ժողովրդի թիւ 1 թշնամին են: Ուրեմն ոգեկոչել «Առաջին Հանրապետություն»ը նշանակում է ոգեկոչել Դաշնակցությունը եւ ընդունել նրա դրական դերը Հայոց նորագոյն պատմութեան մէջ:

**Բայց, միթէ՞ այդ «Առաջին Հանրապետություն»ը Դաշնակցական Հանրապետություն էր: Գիտենք, որ ղեկավարութեան մէջ կային նաեւ այլ կուսակցությունների անդամներ եւ ոչ-կուսակցականներ:**

Այո, ճիշտ է: Դաշնակցությունը պարզապէս ամենակարեւոր կուսակցությունն էր հայ կեանքում եւ ճնշիչ մեծամասնություն ամէն տեղ, 1917-ի Հոկտեմբերին Թիֆլիսում գումարում Արեւելահայոց համագումարից, մինչեւ այդտեղից ընտրուած Ազգային Խորհուրդ, որի նախագահն էր Աւետիս Ահարոնեանը, մինչեւ իրերայաջորդ կառավարական կազմերը, որոնց ի միջ այլոց Հայաստանի սոսկալի աղքատ ու քառասային վիճակը տեսնելով այլ կուսակցութեան ներկայացուցիչները մերժում էին մասնակցել, մինչեւ 1919-ին ընտրուած Հայաստանի Խորհրդարանը: Ի հարկէ, Թիֆլիսի բարօր կեանքը թողած եւ աղքատ ու անհրապոյր Հայաստան եկած շատ ոչ-դաշնակցական ղեկավարներ, հենց առաջինը՝ Ժողովրդական կուսակցութեան անդամ, Հայաստանի առաջին կրթութեան նախարար՝ Միքայէլ Աթաբեկեանը Թիֆլիսում թողած գործերը պատրուակ բռնելով հեռացաւ:

Դաշնակցական Հանրապետություն որակումը տրուեց ի սկզբանէ հենց հայ բոլշեւիկ գործիչների կողմից, որոնք սկզբից էլ դէմ էին անկախութեան գաղափարին: Անաստաս Միկոյեանը յայտարարել էր թէ *«այ շովինիստները... առաջ են քաշում յանցաւոր քիմեռային գաղափար՝ պատմական Հայաստանի սահմաններում «Մեծ Հայաստանի» ստեղծում: ... Մեր կուսակցությունը չի կարող սատարել ո՛չ «Մեծ» եւ ո՛չ էլ «Փոքր» Թրքահայաստանի գաղափարին: Դա Արեւմտահայաստանի համար իսկ Կովկասեան բաժինը արդէն Ռուսաստանի մաս էին համարում: Ստեփան Շահումեանը գրել էր Լենինին, Մեր դրությունը միջազգային տեսակէտից իսկապէս սոսկալի է: Անկախ Հրաստան, անկախ Ադրբեջան, որպէս թէ անկախ Հայաստան: Հայկական Գործերի Կոմիսարեատը արդէն ուղղակի կռիւ մղեց անկախ Հայաստանի դէմ, դա որակեց դաշնակցականների որջ ու հաւատացրեց Լենինին, որ հայ ժողովուրդը անհամբեր սպասում է թէ երբ պիտի Կարմիր բանակը ներս մտնի, դաշնակցական մաուզերիստները քշուեն Հայաստանից ու Հայաստանը Ռուսաստանի մաս կազմի:*

Խորհրդայնացումից յետոյ էլ Խորհրդահայ պատմաբանները այդպէս որակեցին անկախ Հայաստանը, իւեղաթիրուած բացատրություններ ու նկարագրություններ բերեցին Սարդարապատի հերոսամարտին—իբրեւ թէ հայ աշխատատուն ու գիւղացին բահով ու բրիչով դէմ դրեց թուրք բանակին—ապա՝ թուրքերի հետ

բանակցութիւններին՝ դրանք Դաշնակցութեան թուրքական օրինատացիա կոչելով, յետոյ հայ բոլշեւիկների խառնակութիւններն ու անկարգութիւնները սաստելու կառավարութեան քայլերին—իբրեւ թէ հազարաւոր բոլշեւիկներ բանտերում չարչարանքի ենթարկուեցին ու գնդակահարուեցին—եւ վերջապէս Հայաստանի խորհրդայնացման գործըթացում—իբրեւ թէ դաշնակները Հայաստանը կոտորակեցին ու ծախեցին թուրքերին:

**Ինչպէ՞ս եղաւ, որ բոլշեւիզմը կամ համայնավար գաղափարները այդպէս մեծ տարածում գտան անկախ Հայաստանում, այնքան մեծ թիւ էին, որ կարողացան 1920-ի Մայիսին ժողովրդին փողոց հանել ու կառավարութեան դէմ ապստամբութեան մղել եւ վերջապէս դիւրացնել Հայաստանի խորհրդայնացումը:**

Հայաստանի անկախացման օրերին բոլշեւիկները Հայաստանում եւ ընդհանրապէս Կովկասում աննշան թիւ էին կազմում: Գիտենք որ Կովկասը ղեկավարող ուժերը Սոցեալ Դեմոկրատ Մենշեւիկներն էին Վրաստանում, Մուսաւաթականները թաթարների մօտ եւ յետոյ անկախ Ազրբեյջանում, իսկ հայերի մօտ Դաշնակցութիւնը: Մի քանի երեւոյթ պատճառ դարձան, որ բոլշեւիկների գաղափարախօսութիւնը տարածուի Հայաստանում:

Նախ Հայաստանի տնտեսական անտանելի վիճակը: Գիտենք, ցարական կայսրութեան փլուզումից յետոյ տնտեսութեան վատթարացում, աղքատութիւն, անգործութիւն, Ցեղասպանութիւնից ազատուած հսկայ թուով գաղթականներ, անտուն, անգործ եւ տարածուող հիւանդութիւններ. մի խօսքով ինչպէս Սիմոն Վրացեանն է ասել անձեւ քառս, որի մէջ գերմարդկային զոհաբերութեամբ գործում էր երկրի ղեկավարութիւնը: Այդպիսի պայմաններում, երբ բոլշեւիկ քարոզիչը հաւատացնում էր ժողովրդին, որ եթէ ռուսները գան երկիրը հաց ու շաքարով կը լցուի, հեշտ էր հաւատալ եւ յուսալ, եւ ընդհանրապէս համայնավար գաղափարները գրաւիչ են հնչում՝ հաւասարութիւն, աշխատատեղերի ու բանուորների իշխանութիւն, դասակարգային պայքար, ժողովուրդների եղբայրութիւն:

Երկրորդ՝ ընդունուած փաստ է, որ երբ 1919-ին բոլշեւիկներն հալածուում էին Վրաստանում եւ Ազրբեյջանում, Հայաստանի իշխանութիւնը ընդունեց հայ բոլշեւիկներին, օգնեց նրանց բանտերից փախչելու եւ նոյնիսկ աշխատանք հայթհայթեց նրանց: Ինչո՞ւ: Կարս Ուսումնարանի ուսանողների համար էլ զարմանալի էր դա: Իմ բացատրութիւնը սա էր՝ այս հայ համայնավարներից շատերը արեւելահայ Դաշնակցական ղեկավարների համալսարանական ընկերներն էին, ընկերվարական գաղափարներով մօտիկ իրար եւ ընդհանուր թշնամու, ցարական կեղեքիչ իշխանութեան դէմ պայքարի զինակից: Յետոյ, իշխանութիւնը յոյս ուներ, որ

բարութիւն անելով կը սիրաշահի դրանց եւ կապահովի նրանց միջնորդութիւնը Մոսկուայի հետ յարաբերութեան մէջ մտնելու: Իշխանութիւնը յոյս ունէր որ Մոսկուան բարիացական վերաբերմունքով կը ճանաչի Հայաստանի անկախութիւնը եւ կօզնի Հայաստանին ու բարիացական կեցուածք կը ցուցաբրի Ռուսաստանի հայկական կազմակերպութիւններին նկատմամբ: Բայց ի հարկէ բոլշեւիկները այդ վերաբերմունքը չփոխարինեցին եւ իրենց դիրքերը օգտագործելով հակա-կառավարական քարոզչութեան դիմեցին ու ժողովրդին ապստամբութեան մղեցին: Ի հարկէ այդ Մայիսեան ապստամբութիւնը այդքան մեծ տարողութիւն չունէր Երեւանում. բայց յաջողութիւն գտաւ Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում եւ Սարի-ղամիշում: Դեռ աւելին հակա-դաշնակցական իրենց մոլուցքը մղեց նրանց մեծ ճիգերով խափանել 1920-ի գարնան Մոսկուայում կայացող Հայաստանի ներկայացուցիչների բանակցութիւնները Մոսկուայում՝ Բոլշեւիկ Ռուսաստանի ներկայացուցիչների հետ:

Երրորդ՝ 1920-ի աշնան երբ Մուսթաֆա Քեմալի զօրքերը Հայաստանի վրայ էին յարձակուում, երբ երկիրը ուժեղ բանակի կարիքն ունէր ու զօրակոչ յայտարարուեց, բոլշեւիկ քարոզիչները խրախուսում էին զօրակոչին չանսալ, եւ դիմել Ռուսաստանի օգնութեան: Եւ դա հաճելի էր բնակչութեան համար քանի որ գիւղացին իր արտն ու այգին պիտի թողնէր ու բանակ գնար, գիւղատնտեսութիւնը պիտի տուժէր ու հետը բերէր սովի վտանգ: Եւ ընդհանրապէս ժողովուրդը յոգնած էր անդադար կռիւներից, Ղարաբաղում, Զանգեզուրում, Նախիջեւանում: Բոլշեւիկները նոյնիսկ աշխատանք էին տանում Հայաստանաբնակ թուրքերին ու թաթարներին կառավարութեան դէմ հանելու. իսկ բանակում հրահրում էին զինուորներին զենքերը վար դնել ու չկռուել քանի որ թուրք զինուորն էլ հայ զինուորի պէս չարքաշ բանուոր կամ գիւղացի է եւ եկել է Հայաստանը Դաշնակների ձեռքից ազատելու: Ալեքսանդրապոլի բոլշեւիկեան յեղափոխական կոմիտէի ներկայացուցիչ՝ օր. Նուշիկը կարմիր դրօշով էր ընդառաջ գնացել թուրք զինուորներին, կոչելով *Ողջո՛յն թուրք ազատարար բանակին, որ գալիս է ազատելու մեզ դաշնակցականների դժխփից:*

### **Ինչպէ՞ս կը եզրափակէք այս հարցազրոյցը:**

Եզրակացութիւնս հետեւեալ է: Նոյն կերպով աւարտեցի Կարս Ուսումնարանի դասախօսութիւնս, ինչպէս նաեւ «Ասպարէզ»ի յօդուածս:

Ըստ իս, 26 տարի անկախութիւն ապրող Հայաստանում ու նոյնիսկ արտագաղթած զանգուածներում դեռ լիովին չի փոխուել 70 տարի արմատ նետած մտայնութիւնը: Եւ այսօր, «Առաջին Հանրապետութեան» ստեղծման 100-ամեակին ընդառաջ, լրատուամիջոցներն ու սոցիալական ցանցերը, ինչպէս եւ կուսակցական օրգանները լեցուն են իրար հակասող յօդուածներով, հարցազրոյցներով, շատերը՝ «Առաջին Հանրապետութեան» հանդէպ հանրային բացասական կարծիք ձեւաւորելու

միտումներով ու հիմնուած խորհրդահայ խեղաթիւրուած պատմութեան սերմանած գիտելիքների վրայ: Ընդհանուր ուղղութեամբ կարծես փորձ է կատարում՝

ա) նուաստացնելու Հ.Յ.Դ.ի եւ անհատ դաշնակցականների ներդրումը Հայաստանի պետականութեան վերածունդի գործում եւ անկախ հանրապետութեան կեանքում,  
բ) հնարքներով արդարացնելու հայ բոլշեւիկների ապագային գործունէութիւնը,  
գ) սքողելու կատարուած վայրագութիւններն ու գործուած ոճիրները՝

Խորհրդայնացումից առաջ եւ յետոյ,

դ) վերակենդանացնելու «Ռուսաստանը Հայաստանի ու հայ ժողովրդի փրկիչ» հին երգը:

Այս բոլորի փոխարէն, կը պատգամէի սովորել պատմութիւնը: Բաց մտքով եւ առարկայօրէն նայել անցեալին: Դաս քաղել գործուած սխալներից, Օրինակել յաջողութիւնները: